Օրինակ յեսս դարձուցանելոյ նամակ պաշտօնի Հայրապետին Հայաստանեաց:

ԳԼՈՒԽ ԽԴ.

Երկիր պագանեմ միայնոյ յԱստուծոյ արարչին մերոյ և փառաւոր առնեմ բարձրագահ և բարեվարք տունն հայոց, և յայտնի ձեզ հարց և եղբարց իմոց, զի 'ի զօրութենէ պաշտօնի իմոյ որ 'ի տէրանց և իշխանաց իմոց և ընդհանուր պատուելի ազգէս հայոց, ընկալեալ, ահա կատարեցի հրամանն ձեր որ 'ի վերայ իմ, և ձեռամբ իմով ետու իշխանութիւն տանուտէրութեան 'ի մէջ ժամանակի սահմանին իշխանութեան իմոյ, առաջինն սրբակրօն Տեառն Սեղբեստրոս արք Եպիսկոպոսի աղձնու տեղակալին սրբազան հայրապետին ամենայն հայոց, երկրորդ Տեառն Վրթանէսի կաղնոյ և փոխանորդ աղուանից հայոց, երրորդ Տեառն Գալստան կաղզվանու և փոխանորդ տուրուբերանոյ հայոց, և այժմոյս յետս դարձուցանելով ընծայեմ նամակ պաշտօնին իմոյ առաջի ատենի պատուականութեան ձերոյ, և 'ի շնորհ 'ի ձէնջ ակն ունիմ, զի ինձ արձակեցարուք 'ի խաղաղութեան, և միաբան տանուտէրք 'ի բերանոյ գծագրին իւրեանց տայեն նմա արձակում 'ի պաշտօնէ, ասելով երթ 'ի խաղաղութեամբ, և առեալ նամակն 'ի ձեռանէ հայրախնամին 'ի վերայ նորա շարադրեալ զամենայն զոր ինչ 'ի բե-